ԲՈՂՈՔ

*Բրանդենբուրգի երկրամասային իշխանություններն օրերս թուրքական կողմի պահանջով դպրոցներում պատմության դասավանդման ուսումնական ծրագրից հանել են Հայոց ցեղասպանությանը վերաբերող հատվածները: Ստորեւ ներկայացնում ենք այդ կապակցությամբ երկրամասի վարչապետ Պլատցեկին եւ կրթության նախարար Ռուպրեխտին ուղղված՝ Բեռլինի «Ճանաչում» աշխատանքային հանձնախմբի բաց նամակը: Հայագետ, իր հայանպաստ գործունեությամբ հայտնի դոկտոր ԹԵՍՍԱ ՀՈՖՄԱՆԻ կողմից հիմնադրված եւ ղեկավարվող՝ այս հեղինակավոր կազմակերպության վերոնշյալ նախաձեռնությունը արտերկրի հասարակական շրջաններում արդեն իսկ լայն արձագանք է գտել:*

# ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՎԵՐԱՆԱՅՎԻ

## *Բրանդենբուրգի երկրամասը ղեկավարվում է Թուրքիայի կողմից*



Զանգվածային լրատվամիջոցները ձեզ համարում են քաղաքական առումով պատասխանատուներ՝ 9-րդ եւ 10-րդ դասարանների պատմության ուսումնական ծրագրից Օսմանյան կայսրության հայ քաղաքացիների ցեղասպանությունը հանելու համար: Դա, ըստ կրթության նախարարության խոսնակի, կատարվել է այն բանից հետո, երբ դրանից երկու շաբաթ առաջ թուրքական գլխավոր հյուպատոս Այդին Դուրուսոյն ձեզ երկուսիդ հանդիպել է ճաշկերույթի ժամանակ եւ բողոքել ուսումնական ծրագրերում հայերի ցեղասպանության հիշատակման առնչությամբ:

Այդ տխրահռչակ վճիռը կայացվել է մի այնպիսի ժամանակահատվածում, երբ Օսվենցիմի Նացիոնալ-սոցիալիստական համակենտրոնացման ճամբարի ազատագրման 60-րդ տարելիցի կապակցությամբ ողջ աշխարհում սկսել են կրթությունը արժեւորել որպես հետագա ցեղասպանությունների կանխարգելման միջոց: Միաժամանակ ամբողջ աշխարհում նախապատրաստություններ են տեղի ունենում 1,5 միլիոն հայերի (ըստ Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանության գնահատման) զանգվածային սպանդի 90-րդ տարելիցը նշելու համար:

Այն, որ Բրանդենբուրգի երկրամասը իրեն բազմիցս թույլ է տալիս Թուրքիայի կողմից կառավարվել, մենք նաեւ եվրոպական միությանը Թուրքիայի անդամակցության հարցի աշխույժ քննարկումների պայմաններում ենք խիստ անհանգստացուցիչ համարում: 2001 թվականին Պոտսդամի՝ Լեփսիուսի տան պատճառով բանը հասավ պատմական իրողությունների բացահայտ խեղաթյուրումների, իսկ 2005-ին Բրանդենբուրգի կառավարությունն է ուսումնական ծրագրում կատարված փոփոխություններով թուրքական դիվանագիտությանը հաճոյանում: Այլեւս ինչի՞ հետ կարելի է հաշվի նստել, եթե Թուրքիան դարձած լինի Եվրոպական միության լիարժեք անդամ:

Մենք սա հարցնում ենք ոչ վերջին հաշվով թուրքական կրթության նախարարության՝ 2002 եւ 2003թթ. սկանդալային միջոցառումների խորապատկերի վրա: Չնայած եվրոպական պառլամենտը իր բանաձեւերում 1987-ից ի վեր շարունակաբար եւ վերջին անգամ 2004թ. դեկտեմբերի 15-ին Թուրքիային կոչ է արել Հայոց ցեղասպանությունը ճանաչել որպես պատմական իրողություն, թուրքական կրթության նախարար դոկտոր Հուսեին Կելիկը Օսմանյան կայսրության քրիստոնյա էթնոսների (բացի հայերից նաեւ ասորիների, ինչպես նաեւ փոքրասիական հույների) ցեղասպանությունը ժխտելու նպատակով իրագործում էր միջոցառումներ, որոնց թվում շարադրությունների մրցույթ: Այն ուսուցիչները, որոնք համարձակվում էին քննադատական հարցադրումներ կատարել, ժամանակավորապես քրեական, իրավական հետապնդումների էին ենթարկվում: Միաժամանակ դպրոցական պատմության դասագրքերի նոր հրատարակությունների մեջ Թուրքիայի փոքրամասնությունների ներկայացուցիչները (քրիստոնյաները եւ հրեաները) որակվում էին իբրեւ «դավաճաններ», «բարբարոսներ» եւ «լրտեսներ», իսկ սինագոգները եւ եկեղեցիները՝ «վնասակար հաստատություններ»:

Ինչպե՞ս եք դուք հիմնավորում այն, որ ձեզ թույլ եք տալիս ենթարկվել մի պետության կողմից արված առաջարկությանը, որն ինքը մինչեւ վերջերս փոքրամասնությունների հանդեպ խորագույն թշնամանքով բնութագրվող, ցեղասպանության բռնադատական ժխտմանն ուղղորդված կրթական քաղաքականություն էր վարում եւ նաեւ ներկայումս է կամենում պատժի ենթարկել մի ցեղասպանության հիշատակությունը, որի փաստականությունը գեթ չնչին իսկ չափով բանականություն ունեցող ոչ ոք կասկածի չի ենթարկում:

Որպես պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրության կարեւորագույն դաշնակից հենց Գերմանիան է, որն այն ժամանակվա Թուրքիայի հայ ազգաբնակչության հանդեպ իրագործված ոճրագործություններ բացահայտ եւ պարզորոշ լուսաբանման կարիքն ունի՞: Գերմանիան այն ժամանակ ռազմական դաշինքի իր շահերից ելնելով՝ այդ ոճրագործությունները լռելյայն հանդուրժել է: Նաեւ այդ հանգամանքները պետք է մեզ դրդեն Ցեղասպանության 90-րդ տարելիցին մեր երկրամասի հայ համայնքին չվշտացնել նրանց նախնիների հանդեպ իրագործված ոճրագործությունների ժխտման հարցում մի նոր ներդրում կատարելով:

Նվազագույնը, ինչ դուք ձեր կողմից հիմա պետք է անեք վերստին բացված վերքերը ամոքելու համար, պատմության ուսումնական ծրագրին վերաբերող ձեր որոշման վերանայումն է: Հայոց ցեղասպանությունը Շոհայի, ինչպես նաեւ Կամբոջայի եւ Ռուանդայի ցեղասպանությունների հետ միասին հանդիսանում է total domestic ցեղասպանության՝ 20-րդ դարի չորս դրսեւորումներից մեկը (Ռ.Մելսոն): Այդ իսկ պատճառով այն պետք է մյուսների հետ միասին դարձյալ ներառվի Բրանդենբուրգի ուսումնական ծրագրում:

Դրանից զատ, մարդու իրավունքների մեր կազմակերպությունը պատշաճ է համարում, որ Բրանդենբուրգի կառավարությունը եւ երկրամասային պառլամենտը 2005թ. ապրիլի 24-ին հանդես գան Հայոց ցեղասպանությանը վերաբերող հայտարարությամբ: Գերմանական կառավարության պատասխանատուները պետք է 90 տարի անց ի վիճակի լինեն նախկին ոճրագործների հետ չնույնանալ եւ հաղթահարել այն բարդույթները, որոնք ոճրագործության ժամանակ Գերմանիային դրդեցին լռել:

*Գերմաներենից թարգմանեց*
*ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻՆ*